

բարձրերէն եկան , ուսկից ինջան հոն և Առղոլ ձիաւորներն հին ցամաքին վրայ , մէկ կողմանէ Հռովմարշաւելու , միւս կողմանէ Շաքինին տիրելու : Առ կով մուկն հիմա ամէն կողմ կ'ածի , և օրէ օր աւելի կը խոշորնայ , ու աւելի կատղած ու սրառու կ'ըլլայ , կատուին կը յազթէ , շան հետ կը կռուի , և տը զու ու մարդու վրայ կը յարձակի , մանաւանդ քնոյ մէջ . մարդու դիակ կ'ուտէ՝ միշտ աշուշներէն սկսելով :

**Ճանապարհորդութիւնը ընդ ծիր աշխարհի :** ( Տես երես 47 )

**Անցր ընդ կիրան Բարսկոնաց կամ ընդ  
Ջրանց Մակելյանի :**

Առետասան հազար կուսանաց օրը 52 աստիճանն հասնելով , վաթսունուերկու փարսախ երկայն նեղուց մը գտանք , որ է ըսել 330 մղոն . և այս բանս մեծ հրաշք սեպելով . կոչեցինք զայն Հրուանդան Առետասան հազար կուսանաց . լայնութիւնը տեղ տեղ փարսախ մը և տեղ տեղ ալ կէս փարսախ է : Այս նեղուցը ձիւնալից բարձր լեռներէ շրջապատած է , և կը նայի դէպ 'ի մեծ ծովը , որ ըսուեցաւ Խաղաղական ծով . և գարձեալ աեղ տեղ ալ շատ խորունկ է , ինչուան 25 , 30 կանգուն : Ինաւ չեր գտնուեր այս նեղուցն , եթէ Փերնանդ Մակալիանէս մեծ նաւապետը ըլլար . վասն զի միւս նաւերուն առաջնորդները հակառակ կարծիք ունեին , և կ'ըսէին որ այն կիրճը ըսրս կողմէն փակ էր . դիւտէր Փերնանդ որ ատանկ նեղուց մը կար զորն որ Շատրուկալի թագաւորին գանձատանը մէջ պահուած աշխարհայոց տախտակի մը վրայ տեսած էր , գծագրեալ Արտինոս պոչեմիացի ըստած պատուական մարդէն :

Պակայն բիւր գժուարութիւններով գտնուեցաւ այս նեղուցս . երբ կրծիս մէջ մտան՝ գտան երկու բերան , մէկը դէպ 'ի հարաւ և միւսն դէպ յարեւլս .

մեծ նաւապետը հրաման տուաւ Ս . Անդոն և Յղութիւն նաւերուն ; որ երթան նային թէ արդեօք դէպ 'ի հարաւ եղած բերանն ունի ելք մը առ ծովն Խաղաղական Ս . Անդոնի նաւաստիքը չուզեցին Յղութիւն նաւուն սպասել , որովհետեւ կ'ուզէին Ապանիա դառնալ , ինչպէս որ ըրին ալ . վասն զի հետագայ գիշերը մեծ նաւապետին Ռուլար Ա'եսքիդա եղբօրորդին յափշտակելով , շրջայի զարկին ու հետերնին առած դէպ 'ի Ապանիա Ճամբայ ելսն : Այս նաւուն մէջն էր բոնած հսկաներնիս մէկը , որ տաքէն զրկուելով՝ շուտ մը մեռաւ : Այս այսպէս Ս . Անդոն նաւը նոյն գիշերը փախաւ այն կրծէն : Ա'եկալ նաւերը որ գացեր էին դէպ յարեւելս եղած բերանը գտնելու , միշտ այն կը ընձէն երթալով , փառաւոր գէտ մը հասան , զոր կոչեցին հրաչուէն , որովհետեւ հոն ամբաւ բազմութեամբ կը գտնուէր այս ձուկէն . մօտ չորս օր ուշացան այն տեղը մէկալ երկու նաւերուն սպասելով . այս միջոցին մեծ մակոյկ մը պատրաստեցին ամէն հարկաւոր եղած բաներով , ու դէպ 'ի մէկալ ծովը խաւրեցին որ հոն եղած անցքը կամ զլուխը գտնէ . ասիկայ քանի մը օրէն զառնալով , պատմեցին մէջի մարդիկը թէ եղած անցքը գտեր էին : Այս լսելով մեծ նաւապետը , այնպէս ուրախացաւ որ ինքիրմէ գուրս ելած՝ կու լար , և կոչեց զայն Պատրի Տենչալի , երկայն ատենէ 'ի վեր անոր փափաքելուն համար : Ատ դարձան ան ատեն մէկալ նաւերը փրնարուելու համար , որոնցմէ միայն Յղութիւնը գտան . հարցուցին թէ ուր է Ս . Անդոնը , և իմացան թէ աներեսոյթեղէր է . վասն զի կիրճը մտնելէն 'ի վեր չէին տեսած զանիկայ , և կրծին մէջ փնտուելով չէին կրցած գտնել . ասոր համար լեռնակի մը գլուխը զրօշ մը տնկեցին՝ վրան ալ նամակներ , որպէս զի հոն գալով տեսնեն թղթերը , և իմանան թէ իրենք ուր են . այսպէս ըրին ուրիշ երկու տեղ ալ : Խաչ մ' ալ տնկեցին կղզեկի մը մէջ , որուն քովին՝ ձիւնապատ բարձր լեռան մը ծոյրէն :

աղուոր գետ մը խոխոջելով կը վազէր և մերձակայ ծովը կ'երթար . այս այն գետն է որուն հրաչուին անունը զրին . ըսած կրծերնուս մէջ հոկտեմբեր ամսուն գտնուելով , գիշերը չորս ժամ քշեց : Այսքը դրած էր նաւապետը , որ եթէ այս նեղուցը անցք մը չունենար , այնչափ առաջ երթայ մինչև որ հակարջային բեեռին տակ 754 աստիճանն հասնի . ուր ամսոն ըլլալով խիստ պայծառ պէտք էին ըլլալ գիշերները : Այս նեղուցը կոչեցին Շաղակոնեան , որուն մէջ նաւարկելու ատեն , իւրաքանչիւր երեք միջնին ապահով նաւահանգիստ մը , սքանչելի ջուր , առատ փայտ , ձուկ և կարոս<sup>1</sup> կը գտնէին , որ խիստ շատ կը գտնուէր աղբիւրներու քով . կարծեմ թէ բոլոր աշխարհիս վրայ ասկէ աւելի գեղեցիկ նեղուց մը չկայ : Զկանց որս մը տեսանք որ խիստ զուարձալի էր . աս ծովուս մէջ տեսսակ մը ախորժահամեւ թզաչափ երկայնութեամբ ձուկ մը կայ որուն գոլոնտինէ կ'ըսեն , որ օգուն մէջ ալ կը թուզի . ուրիշ երեք տեսակ կանգնաչափ երկայնութեամբ ձկներ ալ կան որ ասոնց ետեւն ինկած զիրենք կ'որսան . և երբ գոլոնտինէ իւրաքանչին կը մօտենան , մէջերնէն ուսանք շուտ մը ջրէն գուրս ելլալով , առանց ջրին դպչելու վտաւանի մը չափ տեղ կը թուզին . իսկ մէկաննք ծովուն տակ անոնց շուքին ետեւէն կը վազեն . սովորաբար աս խոշոր ձկները նորէն ծով չեն իջնար ինչուան որ իւրենց որսէն քանի մը հատ ձեռք ձգելով չուտեն :

**Խաղաղական Ծովունի , Թղորառ կղզեւաց , և հակարջային քեւոյին ու նուն եղած աստղներուն վրայ :** Թէ ինչպէս նուն տեղը կողմնացուցին աւելլը կը խոտորի :

1520 նոյեմբերի 28<sup>ին</sup> այս կրծէն խաղաղական Ծովին անցանք և երեք ամիսու քսան օր նաւարկեցինք առանց ամե-

նեին երկիր գտնելու , և որչափ որ պաքսիմատ ունէինք կերանք . երբ հատակ սկսանք անոր փոշին ուտել , որ լի էր որդերով և սաստիկ գէշ կը հոտէր . խորած ջուրերնիս գեղնած էր և նեխած շատ օրերէ ՚ի վեր . ձեռք զարկինք կաշի և նաւուն հաստ պարաններն ուտելու . և որովհետև խիստ պնդացեր էին արևէն , անձրւներէ և քամիէն , հինգ կամ վեց օր թրջոց կը դնէինք ծովուն մէջ , և յետոյ հողէ ամանի մը մէջ եփելով՝ կ'ուտէինք : Ամանց լնտերքը այն չափ ուռեցան , որ չկրնալով ծամել խեղճութեամբ կը մեռնէին . այս պատճառաւ տասնեւինը հոգի մեռան , նաև հոկան և պրազիցի հնդիկ մը . 25 կամ 30 հոգի ալ այն ապահնանի հիւրնդան , որ տեղերնէն չէին կրնար շարժիլ . և խիստ քիչ մարդ մնաց որ հիւանդութիւն մը չունենայ : Այս երեք ամսուան և քսան օրուան ընթացքին մէջ 4000 փարսախ կտրեցինք , միշտ ծոյի մը մէջէն Ճամբայ ընելլով՝ որ իրաւամբք խաղաղ կրնայ ըսուիլ . վասն զի բոլոր այս ատենուան մէջ առանց երկիր գրտնելու , ոչ քամի և ոչ մըրիկ ունեցանք . միայն երկու ամայի կղզեակներ գտանք , որոնց մէջ հազիւ թէ քանի մը թուզուն և ծառեր կը տեսնուէին . ասոր համար կոչեցին զանննք թաշուառ Աղջիք , որոնք իրարմէ զրեթէ 200 փարսախ հեռուեն , որոնց եղերքը շատ խօրունկ է ծովը , և ուրյաձնախ են դիպուրնի ըսուած ձկները : Բամձ կղզիներնէս առաջինը հասարակածէն 15 աստիճան հեռու է , գէպ ՚ի հակարջային բեեռ . իսկ մէկալը ինն : Այնք օրը սովորաբար 50<sup>ին</sup> ինչուան 70 փարսախ տեղ Ճամբայ կ'ընէինք . և թէ որ բարերարն Այսուած մեղիյատակ օդ չտար , անհրաժեշտ ամենքնիս սովուն պիտի մեռնէինք . և հաւաստի կրնամ լսել որ ուրիշ ոչ ոք այսպիսի Ճամբորդութիւն մը ընելլիք ունի :

Արծէն կամ թէ լսենք Ավելիանու Ակտասան հաղար կուսանաց զլիսէն , որուն զիմացը կ'իյնայ Տենչալի Գլուխը , գէպ ՚ի մէկալ ծովն երթալով՝ բնաւ-

կարևոր բան մը չգտնուիր :

Հակարջային բեեւին վրայ տեսնուած աստղերը բօլորովին տարբեր են արջային բեեւին վրայ տեսնուածներէն, և աւելի բազմաթիւ աստեղաց խումբեր կը տեսնուին, որոնք երկու միգամածներ են քիչ մը բաժնուած իրարմէ, և մէջտեղնին ալ քիչ մը մթընկէկ : Այսոնց մէջ երկու աստղ կայ ոչ այնչափ մեծ և ոչ այնչափ լուսաւոր, որոնք խիստ քիչ կը շարժին . և հմ է հակարջային բեեւը : Աեր կողմնացուցին ասեղը խոտորիլ սկսելով, միշտ դէպ՚ի արջային բեեւ կը դառնար, և զօրութիւնն ալ տկար էր, քան ինչ որ արջային բեեւին մօտ եղած ատենն ունէր . ուստի և հարկ էր օգնել մագնիսով ասեղին զօրութիւնը աւելցընելու համար, վասն զի տեղէն չէր շարժէր, ինչպէս որ կը շարժի մեր կողմերը : Խրբ ծոցին մէջտեղն հասանք, խաչ մը տեսանք հինգ պայծառ աստղներով, դէպ՚ի արևմուտք և իրարմէ հաւասար հեռաւորութեամբ :

Այս օրերս դէպ՚ի արևմուտք նաւարկեցինք, այնչափ որ գիշերահաւասարի ծրին մօտեցանք, և ինչուան երկայնութեան 120<sup>o</sup> աստիճանը առաջ գացինք դէպ՚ի հարաւային բեեւը : Հոս հասնելէն ետքը սկսանք ետ դառնալ դէպ՚ի մեր ձամբայ ելած տեղերը :

Հոս կը վերջացընենք մեր ձանապարհորդին տուած տեղեկութիւնները, որ դեռ շատ երկայն են : Հարկ է ըսենք որ մէջի տուած ամէն տեղեկութիւններուն պէտք չէ առանց ընտրութեան հաւատալ . որովհետեւ ժամանակին նախապաշարումներն և ամէն տեսակ գիտութեանց և արուեստից ազօտ և թերակատար ծանօթութիւնները որ ունեին մարդիկ ասկէ երեք գար առաջ, իրենց շատ բան նորատեսիլ մը երեցուցած է : Իրեն զրուածքին գլխաւոր յար-

գը աս կողմանէ է, որ Ո՞ակեյլանի ձամբարդութեանց վրայ մանրամասն տեղեկութիւն կու տայ, որ իրմէ զատ ուրիշ մը գրած չէ . և աս տեղեկութիւններս ուրիշն առնելով կամ լսելով շարագրած է, այլ ինքնին ականատես գըտնուելով : Իր ձեռագիրը Ո՞իլանու Ո՞յլը բրոսեան գրատան մէջ կը պահուի, և աս վերջերս գտնուելով Խտալերէն և Գաղղիարէն քանի մը տպագրութիւններ ալ ունեցաւ :

Զինուորական կին մը :

Ես վերջերս Բարիզ անկելանոցի մը մէջ 84 տարուան կին մը մեռաւ Ծանրեղիա Վինիկէօր անունով, որ 1800<sup>4</sup> սկսեալ 200 ֆրանգ տարեկան թոշակ ունէր տերութէն, ըրած զինուորական ծառայութեանցը փոխարէն . և աս թռաշակին վրայ ուրիշ մըն ալ աւելցուցեր էր ետքի տարիներս հիմակուան կայսրը : Բայց ինչ արգեանց համար արդեգք. վասն զի Վինիկէօր 1793<sup>4</sup> ինչուան 1812 մասնակից եղեր էր իբրև զինուոր Հասարակապետութեան և կայսրութեան պատերազմներուն, Սան-Ժէն անուամբ : Իր քաջութեան առջի փորձը ցուցըցեր էր Կանգղիացոց դէմ, Դաւլմնի պաշարման ժամանակ, ուր որ ծանօթացէր էր նաև Ո՞եծին Կաբոլէնի հետ, որ դէռ ան միջոցին պարզ սպայ էր : Ո երջապէս Վինիկէօր որ քան տարի անընդհատ քաջերու մէջ կենալով միշտ նշանաւոր եղած էր . քաջարարութեր հետ բարի կնկան մալ անուն ժառանգած էր . և ինչպէս կ'ըսեն լրագիրք, շատ ախորդելի բան էր իր բերնէն ըրած պատերազմներուն պատմութիւնը լսել :

